


105 JAN 2010

ՀՈԽՀ ԿՈԼԵԿՑԻՎ ՏԵՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ  
Վ. ԱՐԶՈՒԹՅՈՒՆ - ԿՈԼՏԵՏԱԿԵՆՏՐՈՆ



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ  
ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ



1930

23.03.2013

30. 953

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ՆԵՐՔԻՆ  
ԿԱՆՈՆՆԵՐԸ

Գյուղատնտեսական արտելի տնտեսության  
դեկավարությունը։ Արտելի վարչությունը կա-  
տարում է իր աշխատանքները կանոնադրու-  
թյան, ընդհանուր ժողովի և այս ներքին կա-  
նոնների հիման վրա. այս կանոնները չեն փո-  
խարինում կանոնադրությանը, այլ պարզաբա-  
նում և զարգացնում են նրա հոգվածները։

Ի ՎԵՐՉՈՒԹՅՈՒՆ, ԸՆԴԵՐՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՇՏՈՆՑՈՆԵՐԻ ՊԵՐՏԱ-  
ԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Վարչությունը հանդիսանում է տնտե-  
սության ընդհանուր դեկավարն և բոլոր աշխա-  
տանքները համաձայնեցնում են արտելի տնտե-  
սարտադրական ծրագրի պահանջների հետ։  
Նրան է վերապահվում բոլոր դեկավարող կար-  
գավորությունները և հետեւում են բոլոր աշխա-  
տանքներին ու նրանց իրազործմանը։ Վարչու-  
թյան վորոշումները կյանքում կենսագործելու  
պարտականությունները դրվում են վարչ նա-  
խագահի վրա։

15085-57

Գրառեալ. № 5199. Պատ. № 556. Տիրաժ 7000

Պետհրատի Յերկրորդ Տպարան, Յերեանում.

2. Նախագահին ոգնելու համար—նայած պահանջման, նշանակվում են արտելի տնտեսության առանձին ճյուղերի համար հատուկ ղեկավարներ, ինչպես վարչության անդամներից, նույնպես և արտելի մյուս անդամներից, կամ թե գրսից հատկապես մարդիկ են հրավիրվում ժամանակավոր կամ մշտապես աշխատելու պայմանով:

3. Տնտեսության առանձին ճյուղերի ղեկավարները պատասխանատու յեն իրենց աշխատանքի համար, արտելի վարչության և նախագահի առաջ ու պարտավոր են կատարել վերջինների ցուցմունքները:

4. Այն բոլոր անձինք, վորոնք ղեկավարում են տնտեսության հատուկ ճյուղերը սեկցիաները (այդեզրծության, անասնապահության, բանջարաբուծության, դաշտավարության և այլն) պատասխանատու յեն գործերի ժամանակին և ուղիղ կատարման համար և պարտավոր են ժամանակին ճիշտ հաշիվ ու տեղեկանք տալ արտելի վարչության:

5. Տնտեսության վորևե ճյուղի ղեկավարի անփույր ու անուշադիր վերաբերմունքի հետեւանքով արտելի տնտեսության հասած մնասի ղեկքում ղեկավարը, համաձայն արտելում սահմանված կանոնների, հեռացվում է իր պարտա-

կանություններից և վարչության վարուժամբ կրում է նյութական պատասխանատվություն անգամ կարող ե հեռացվել ու դատի տրվել:

6. Արտելի վարչության քարտուղարը ղեկարում է արտելի գործնեությունն ու գրագրությունները և կազմում է վարչության նիստերի արձանագրությունները:

7. Գանձապահը, վորը ցանկալի յե, վոր լինի վարչության անդամներից մեկը, ղեկավարում ու կատարում է բոլոր գրամական գործառնությունները ընդունում և պահում է ամեն տեսակի արժեքների մուծումները և վճարումները. գրամական գործառնությունները արտելի գանձապահը կատարում է վարչության նսխագահի կամ նրա տեղակալի գրավոր թույլարվությամբ:

Գանձապահը վոչ մի ղեկքում իրավունք չունի դրամ վճարել վորեւ մեկին առանց անդորրագրի ու սացողի սորտագրության. դրամը սացգում ու բաց ե բողնիվում-վարչ. նախագահի կամ նրա իրավական փոխարինողի կարգագրությամբ:

Դրամական մուծումների և հանձնումների հաշվառման համար գանձապահը պահում է մուտքի և յելքի անդորրագրեր և որագիրք (գրամարկի սեագրության գիրք): Դրամական ամեն

մի հանձնման համար գրվում ե անդորրագիր, վուրի արմատի վրա ստորագրում ե ստացողը:

Անդորրագրերի արմատը, վորտեղ գրված ե հանձնված գումարը, գանձապահը տալիս ե հաշվետարին անցկացնելու դրամարկղի գրքի մեջ։ Դրամարկղում վորպես կանոն դրամը փոչ պետք է պակասի յեվ փոչ ել ավելանա, յերկու դեպումն ել զանձապահը պատասխանատու յե։

Վերստուգիչ հանձնաժողովը պարբերաբար, (տարին փոչ պակաս քան 4—6 անգամ) առանց գանձապահին իմաց տալու ստուգում ե դրամարկղը, նրա յելք-մուտքը և փաստացի մնացորդը։ Հայտնաբերած բացերի՝ պակասորդի կամ ավելցուկի մասին կազմվում ե մանրամասն արձանագրություն ուր ստորագրում ե և ինքը գանձապահը՝ պակասորդի պատճառների հետ միասին վերստուգիչ հանձնաժողովը ներկայացնում ե փարչության իր յեղակացությունը։ Վարչության նիստում պակասորդի խնդիրը քննելիս անպայման պետք ե հրավիրվի նաև վերստուգիչ հանձնաժողովի նախագահը կամ ներկայացուցիչը։

Յեթե պարզվում ե, վոր պակասորդը սխալի հետևանք չե այլ գանձապահի կողմից յուրացվել ե, փարչությունը պարտավոր ե գանձել նրանից պակասորդի գումարը, նեռացնել

անմիջապես պաշտոնից և հարկ յեղած դեպում դատի տալ:

Բոլոր դրամական արդարացուցիչ փաստաթղթերը հանձնվում են հաշվետարին, հաշվետվություն կազմելու համար, և նա պատասխանատու յե այդ փաստաթղթերի պահպանմանը ու կանոնավոր դասավորման գործում։

8. Հաշվետարը տանում ե դրամարկղի գիրքը և բոլոր յելք ու մուտքի գրանցումները, աշխատանքների գիրքը, տախտակները, ցուցակները (տնտեսության ամեն մեկ ճյուղի ղեկավարի տված տեղեկանքների հիման վրա) այն ձևերով, վոր մշակել ե վարչությունը և հաստատել ե ընդհանուր ժողովը։

Մթերքների և նյութերի հաշվառման համար հաշվետարը տանում ե հատուկ գիրք, վորտեղ ամեն մի մթերքի և նյութի համար բաց և անում առանձին հաշիվ։

9. Հաշվետարը պահում ե նույնպես և ինվենտարի (գույքի) հաշվառումը։ Հաշվետարն իրավունք չունի ինվենտարի գրքի մեջ վորեւ փոփոխություն մատնել։ Դրա համար հարկավոր ե ունենալ փաստաթուղթ, այսինքն ընդհանուր ժողովի կամ փարչության վորոշումը։ Կամ այն ակտերը, վոր կազմել են վորեւ ինվենտարի ընդունելու կամ պակասելու մասին։ Ամբողջ գույ-

քի ցուցակագրությունը կատարվում եւ անտեսական տարփա կամ վերջին, կամ ոկզբին։ Վորեե փչացած կամ տնտեսությունից դուրս ընկած գույքը ցուցակից հանելու համար պահանջվում է վարչության վորոշումը։ Այդ վորոշումը պետք եւ հաստատված լինի ընդհանուր ժողովի կողմից։ Վեր։ Հանձնաժողովի յեղակացության հիման վրա։

10. Պահեստապետի, վորին նշանակում եւ արտելի վարչությունը, պարտականությունն եւ ընդունել պահել բաց թողնել մթերքներ, գյուղատնտեսական ինվենտար, անտեսական առարկաներ և նյութեր։ Պահեստապետը բաց եւ թողնում պաշար և նյութեր նախագահի կամ նրա փոխարինողի, (վորը նշանակված եւ լինում վարչության կողմից) գրավոր կարգադրությամբ և ամենայն ճշությամբ հայտնում եւ հաշվետարին ընդունված ու բաց թողնված իրերի մասին։ Պահեստ մտնող ապրանքների մուծումը գրքում կատարվում եւ համապատասխան փաստաթղթերով (որինակ՝ գնված ապրանքների հաշվիը) կամ ակտով, հաստատված արտելի վարչության նախագահի կամ նրա տեղակալի կողմից։

Պահեստում նորմայից դուրս պակասորդ մթերքների կամ իրերի արժեքը գրվում է պահ-

հեստապետի հաշվին։ Իսկ պահեստապետի անփույթ վերաբերմունքի հետևանքով փչացած իրերի արժեքը նույնպես գրվում է պահեստապետի հաշվին։

Պահեստապետը պատասխանատու յէ իրեն հանձնված գույքի ու մթերքների խնամքով պահպանմանը։

Պահեստապետը պարտավոր է պահեստի թերությունների մասին տեղեկացնել արտելի վարչության նախագահին և յեթե վերջինը միջոցներ ձեռք չառնի, պահեստապետին իրավունք է վերապահնվում դիմել այդ մասին գրավոր վարչության և վեր։ Հանձնաժողովին։

Շուտ փչացող մթերքներ ընդունելու ժամանակ, պահեստապետը անմիջապես պետք է տեղյակ պահի վարչության նախագահին, միջոցներ ձեռք առնելու համար։

11. Նյութերի, մթերքների և տնտեսական առարկաների առ ու ծախսը կատարվում եւ ամեն անգամ արտելի վարչության վորոշմամբ։

Արտելի վարչության նախագահին իրավունք է արվում, առանց վարչության գիտության կատարել առ ու ծախս այն գումարի սահմաններում, վորը վորոշել է արտելի վարչությունը կամ ընդհանուր ժողովը։

12. Արտելի անունից մուրհակ տալ կամ

ստանալ կարող ե միմիայն արտելի վարչականախաղահը կամ վարչության կողմից լիազորված անդամը այն ել վորոշված գումարների սահմաններում:

Արտելի մթերքներ վաճառողները, արտելի համար իրեր ստացողները նույնպես և մուրհակ տվողները ու ստացողները կամ թե այլ ծախսեր կատարողները պարտավոր են գործողությունը վերջանալուն պես ներկայացնել հաշվապահությանը բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ու տեղեկանքները ստացված կամ ծախսված գումարների, մթերքների ու այլ իրերի վերաբերյալ, վորպեսզի արտելի հաշվապահությունը չշփոթվի և ամեն մեկ գործողություն տեղին ու ժամանակին հիշատակված (անցկացըրված) լինի համապատասխան հաշվապահական գրքերում:

13. Արտելի միջոցները վատնող և յուրացնող անդամները պատասխանատվության յեն կանչվում. իսկ յուրացված գումարը վարչության վորոշմամբ գանձվում է նրանցից:

## II. ՑՆՑԵՍՈՒԹՅՈՒՆ ԿԸՀՄԷԿԵՐՊԱԽՄԻ

14. Արտելի տնտեսությունն իր ամբողջությամբ և առանձին ճյուղերով (գաշտավարություն, անասնապահություն, այգեգործություն

և այլն) վարում են, անշեղ կատարելով տնտեսա-արտադրական ծրագրի պահանջները: Իսկ այդ ծրագիրը կազմում են գավառային կամ գավառի գյուղատնտեսի անմիջական դեկավարությամբ այնպես, վոր առանձին ճյուղերի միջև լինի լիակատար կազ և ամեն մի ճյուղ առանձին վերցրած լինի արդյունավետ:

**Ծանօթություն.**—Տնտեսության առանձին ճյուղերի համար զեկավար նշանակում կամ հրավիրում են. նկատի ունենալով տնտեսության ծավալը և նրա ոժանդակ ճյուղերը:

15. Այն անձը, վորը զեկավարում ե գաշտավարությունը, պետք ե հետեւ, վորպեսզի դաշտային աշխատանքներն իր ժամանակին կատարվեն. շնչավոր ու անշունչ ինվենտարը բանվորական ուժերը լինեն կազմ ու պատրաստ աշխատանքի անցնելու համար և ունենան լրիվ բեռնավորում. սերմերը իր ժամանակին լինեն պատրաստ, գտված ու ախտահանված:

16. Այն անձը, վոր զեկավարում ե անասնապահությունը, պետք ե ուշիուշով հետեւ, վորպեսզի անասունների ընդհանուր խնամքը, կերպակելը, արածացնելը և կերի պաշարի հավաքումն իր ժամանակին կատարվեն: Մշտական աշխատանքների համար գոմում, հորթանոցում, խողանոցում, վոչխարանոցում նշանակվում են

առանձին մարդիկ յերկար ժամանակով։ Կիթվող կովերը բաժանվում են հատուկ կթողների միջև, վորոնք պարտավոր են կթելու կանոններին ճշշտությամբ հետեւ։

Անասունների ծնելու և նման դեպքում անամապահության մասում աշխատողները տառում են համապատասխան հերթապահություն։

17. Այս անձը, վոր փոխադրական (տրանսպորտի) մասի ղեկավարն ե անձամբ հետեւլու յե, վորպեսզի իր ժամանակին և կանոնավոր ինամբ տանեն բանող անասունների վրա (ժամանակին ջրեն, կերակրեն, մաքրեն, հիվանդներին բժշկեն և այլն)։ Նույնպես և հսկում ե իր արամագրության տակ դրված ինվենտարին և լծի սարք ու կարգին։

18. Այս անձը, վորը ղեկավարում ե արդյունաբերական և ոժանդակ ձեռնարկությունները, հսկում ե աշխատանքների ընթացքին, ինվենտարի և սարքավորման պահպանությանը. իր ժամանակին միջոցներ ե ձեռք առնում վերանորոգելու արդ բոլորը և առհասարակ պատասխանառու յե աշխատանքների նորմալ ընթացքին այդ ձեռնարկություններում։

19. Բոլոր ճյուղերի ղեկավարները հիմք ունենալով տնտեսության արտադրական ծրագիրը, մշակում են իրենց հանձնարարված ճյուղի որացուցային ծրագիրը։

20. Շնչավոր և անշունչ ինվենտարի հատկացներն այս կամ այն աշխատանքին, կատարվում ե արտելի վարչության գիտությամբ և նշանակումով. իսկ առանձին ճյուղերում տվյալ ճյուղի ղեկավարի գիտությամբ, վորի հաշվին և գրվում ե և վորից պահանջվում ե իրեն հանձնված ինվենտարը։

21. Այս անձը, վորը ղեկավարում ե տընտեսության այս կամ այն ճյուղը, ամեն որ այդ ճյուղի վերաբերյալ տեղեկություններ ե տալիս (մուտք և յելք) հաշվենտարին արտելի հաշվապահության մեջ ընդունված հատուկ ձեռվանական հետեւվում իրեն հանձնված ինվենտարի նպատակահարմար ու նորմալ աշխատեցնելու, պահպանելուն և հետ ե տալիս ընդհանուր պահեստին այն իրը, վորը տվյալ ճյուղում այլևս պետքական չե։

22. Առանձին ճյուղերի ղեկավարները մյուս անդամների հետ հավասար պետք ե աշխատանք կատարեն, որինակ՝ ցույց տալով. թե ինչպէս պետք ե ոգտագործել աշխատանքի ժամերը։

III. ԱՐՑԵԼԻ ՀՅՄԸՐ ԳՈՒՅՔ ԶԵԹՔ ԲԵՐԵԼՈՒ ՅԵՎ ՈԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

#### ԳՈՒՅՔԻ ԱՂԲԱԿՈՒՐԵԿԵՐԸ

23. Համայնացրված գույքը, արտելի կանոնագրության 4 և 8 կետերի համաձայն կազմ-

վում և ի հաշիվ.—ա) Արտելի անդամների մըսցըված գույքից արտելում մշտական ոգտագործության համար իբրև փայտվճար: բ) Արտելի ընդհանուր միջոցներով ձեռք բերված գույքից, գ) Պետական, կոռպերատիվ և այլ կազմակերպությունների կողմից արտելին անտոկոս և անժամկետ հանձնված գույքից:

#### Գույքի ոգտագործման պայմանները

24. Այն մեռյալ ու կենդանի ինվենտարը, վորը կոլտնտ. անդամը մտցը ել ե, վորպես փայի վճար կամ անբաժանելի դրամագլուխ, համաձայն կանոնադրության 8 և 9 կետերի ոգտագործման համար, արտելի յեկամուտից չի փարձատրվում:

25. Արտելի այն անդամները, վորոնք իրենց գույքը չեն հանձնում արտելին, այս կամ այն պայմանով ոգտագործելու, իրավունք չունեն և միմիանց վարձով տալու, դա նրա համար ե, վորպեսզի անձնական հաշիվներ առաջ չգան անդամների միջև և անդամները նյութական կախման մեջ ըմբնեն մեկը մյուսից:

#### Գույքի պահպանման կարգը

26. Արտելի համայնացրած և վարձով կամ այլ պայմանով վերցրած գույքն Արտելի վար-

չությունը իր հայեցողությամբ հանձնում ե արտելի անդամներից այն անձին, վորը պատասխանատու յե գույքի պահպանման ու գործածության համար:

27. Իր գույքը պահպանելու համար, Արտելը կառուցում, սարքավորում կամ վարձով ե վերցնում համապատասխան շենքեր:

28. Այն անձը, վորին հանձնված ե գույքի պահպանությունը, պարտավոր ե հետևել վորպեսզի գույքը ամբողջ և պատրաստ լինի գործածության համար, և ինվենտարի վերանորոգության անհրաժեշտության մասին ժամանակին հայտնի վարչության:

#### IV ԸԹԽԾԸՆՔԻ ԲԼԺԲՆԱԽՐԻ ԸՆԴԱՄՆԵՐԻ ՄԻԱՅՎ

29. Աշխատանքի ծրագիրը և նախնական բաժանումը, անդամների միջև քննում և հաստատում ե ընդհանուր ժողովը:

30. Անդամներին աշխատանքի յե ուղարկում արտելի վարչության նախագահը կամ նրա տեղակալը կամ թե այս կամ այն ճյուղի ղեկավարը:

31. Նախագահը բանվորական ուժերը պահանջած ժամանակին կարող ե աեղափոխել տընտեսության մեկ ճյուղից մյուսը և ծրագրի հիման վրա ճյուղերի ղեկավարների հետ միասին կազմում ե աշխատանքի ամենորյա կարգը:

32. Աշխատանքի բաժանումը անդամների միջև կառարվում է նախընթաց յերեկոյան, աշխատանքը անդամները կատարում են գործարքային հիմունքներով կամ որավարձով, կամ թե հատավարձով (գործավարձ) պայմանով կամ փորչ ժամկետով—նայած թե, վոր աշխատանքի համար ինչ կարգ է ընդունված տվյալ արտելում:

33. Աշխատանքը անդամների միջև վարչությունը պետք է բաժանի ամենանպատականարմար կերպով այն ե՛ յեթե վորեւ ճյուղում աշխատանքի պահանջ կա առաջին հերթին պետք ե՛ ուղարկվեն այդ ճյուղում արդեն վորոշ փորձառություն ունեցողներին:

34. Վարչության նախագահը կամ աշխատանքների ղեկավարն իրավունք ունի փոխել աշխատանքի կարգը, յեթե այդ պահանջում են որվա յեղանակը կամ աշխատանքի այլ պայմանները:

35. Տնտեսության այն ճյուղերում, վորոնք պահանջում են մշտական հսկողություն, (անառնապահության, բանջարաբուծության, այգեգործության և այլն) նշանակվում են արտելի անդամներից մշտական աշխատավորներ:

36. Արտելի անդամները աշխատանքի կարգը վորոշելիս առանց առարկության յենթարկ-

վում են վարչության նախագահին կամ ճյուղի ղեկավարին: Յեթե արտելի անդամը նկատում է վարչության նախագահի կողմից տրված կարգադրության անիրավացի լինելն անգամ, աշխատանքի չտուժելու համար պարտավոր ե՛ հանձնարարված աշխատանքը կատարելուց հետո այդ առթիվ բողոքել վարչության:

37. Բոլոր անդամները, ստանալով աշխատանքի պատվեր, իրենց աշխատանքին են անցնում իր ժամանակին, վորոշված ժամանակին աշխատանքի դուրս չեկողոներին առաջին անգամ նկատողություն ե արվում, յերկրորդ անգամ կես ժամով ուշացողներին առուզանում են կես որվա աշխատավարձի չափով. իսկ ավել ուշացողներին մեկ որվա աշխատավարձի չափով:

38. Արտելի վարչությունը իրավունք ունի աշխատանքի չգնացողներին փոխարինել այլ անդամներով կամ թե վարձել զբակից ուժեր:

39. Աշխատանքի ակնահայտ անբարեխիղճ կատարելը, առանց հարգելի պատճառների աշխատանքի չգնալը, առհասարակ ղեպի աշխատանքը սառն և անհոտարելը վերաբերմունք ցույց տալը, տուգաննվում ե առանձին կանոններով, վորը մշակում ե արտելի վարչությունը և հաստատում ե ընդհանուր ժողովը:

40. Պատուիները մասնակցում են արտելի



աշխատանքներին այն գեղքում, յերբ առանց  
նրանց աշխատանքները առաջ չեն գնում: Պա-  
տանիների աշխատանքը կատարվում և փորձված  
զեկավարների հսկողության տակ այն հաշվով,  
վոր աշխատանքը նրանց ծանոթացնի տնտեսու-  
թյան կազմակերպման հետ, տա նրանց մասնա-  
գիտական փորձառությունն և այլն:

#### V. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՃԽԱՏԱՆՔԻ ՊԱԾՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

41. Հղի կանայք ազատվում են աշխատան-  
քից համաձայն այդ առթիվ գործող որենքների:

42. Հիվանդության պատճառով աշխատան-  
քից ազատված անդամների վարձառրման կար-  
գի մասին, յուրաքանչօր կոլեկտիվ պետք և  
ունենա հատուկ վորոշում, սակայն հիվանդ ան-  
դամի վարձառրության չափը չպետք է անցնի  
միջին աշխատավարձի  $50^0/_{\text{o}}$ -ից:

43. Բոլոր հիվանդ անդամները բժշկվում են  
(մանավանդ աշխատանքի ժամանակ հիվանդա-  
ցողները) ըստ հնարավորություն արտելի հաշ-  
վով ու նրա աջակցությամբ: Տարվա ընթացքում  
250 որ աշխատած անդամին տրվում և 15 որ  
արձակուրդ, պահպանելով նրա միջին աշխատա-  
վարձը:

44. Արտելի վարչությունն իր անդամներին  
բժշկասանիտարական, գիպիենիալի ու պրոֆիլակ-

տիկայի (նախազգուշական միջոցներ) խնդիր-  
ների հետ ծանոթացնելու նպատակով, կազմա-  
կերպում և շրջանային բժշկի միջոցով ու աշակ-  
ցությամբ դասախոսություններ ու զրույցներ  
(մանավանդ կամանց համար):

45. Արտելի վարչությունը միջոցներ և  
ձեռք առնում ապահովելու արտելի բնակիչների  
համար բժշկական օգնությունը և թույլ չալու,  
վոր տարածվեն վարակիչ հիվանդություններ և  
այլն, որա համար արտելի վարչությունը պայ-  
մանավորվում և մոտակա բժշկակայանի հետ,  
նրանից խորհուրդներ ու ցուցմունքներ ստա-  
նալու համար:

Կոլեկտիվների վարչ կեց կազմակերպվում  
և աշխատանքի պաշտպանության և սանիտարա-  
կան սեկցիա:

46. 12—15 տարեկան պատանիները (յեթե  
նրանք մասնակցում են աշխատանքներին) պետք  
է աշխատեն որեկան 6 ժամ, այն ել այնպիսի  
աշխատանքներ՝ մեջ, վորոնք վնասակար չեն  
նրանց առողջության: 15—18 տարեկան պա-  
տանիները աշխատում են 8 ժամից վոչ ավել:

#### VI. ԱՐՏԵԼԻ ԵՎԵԼՅՈՒԿ ԲԵՆԳՈՐԸԿՆ ՈՒՓԻ ՈԴՏԸԳՈՐԸՑՆ ԿԸԲԳԸ

47. Արտելներում ավելցուկ բանվորական  
ուժը ոգտագործելու և նրանց կազմակերպված

կարգով քաղաքներ կամ այլ աշխատանքի վայ-  
րեր ուղարկելու նպատակով անհրաժեշտ համա-  
րել հետեւյալը.

ա) Կնքել պայմանագրեր Խորհրդավին արհ-  
տեսությունների, արդյունաբերական ձեռնարկ-  
ների և այլ շինարարությամբ զբաղվող հիմնարկ-  
ների հետ, նրանց թե ամառը և թե ձմեռը բան-  
փորական ուժ մատակարարելու վերաբերյալ:

բ) Արտելի ներսում զարկ տալ շինարարա-  
կան աշխատանքներին այն ե կառուցել (համայ-  
նական գոմեր, մարագներ, փոչխարանոցներ, աղ-  
բյուրներ, ջրհորներ, առուներ, ճանապարհներ,  
ճահիճների չորացում, դպրոցներ, տկումքներ,  
բնակարաններ և այլն), նախնական գյուղատն-  
տեսական վերամշակության ձեռնարկներ մթե-  
րումների և այլ հումույթների:

գ) Կազմակերպել տնայնագործական ու ար-  
հետավորական ձեռնարկություններ վոչ դեֆե-  
ցիտավոր հմույթի վրա, այն ե գորգագործանոց,  
դարբնոց, կոշկակարանոց, կար ու ձեի արհետ-  
տանոց, նույնակես և շինանյութեր պատրաստող  
ձեռնարկներ (կրի, աղյուսի, սև դրամիտի գոր-  
ծարաններ, սղոցարաններ, փայտի վերամշակ-  
ման արհետտանոցներ և այլն):

48. Ժամանակավոր վարձու աշխատանքով  
ոգտվելը թույլատրվում ե բացառիկ դեպքերում,

յերբ շտապ աշխատանքները պահանջվող ժամա-  
նակին չեն ավարտվի իրենց արտելի անդամնե-  
րի ույժով, անգամ նրանց լրիվ բեռնավորության  
դեպքում նույնպես և շինարարական աշխա-  
տանքների ժամանակ:

ՎII. ԸՐՑԵԼԻ ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ԸՆԴԵԾԵՌՈՒՄՆ ՈՒ ՎԱՐ-  
ՉԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ.

#### ԸՆԴԻԿԱՏՈՎԻ ԽԱԾՎԱՌՈՒՄ.

49. Արտելում ամեն տեսակի աշխատանք  
անպայման պետք ե հաշվառման յենթարկել:

50. Աշխատանքների ճշգրիտ հաշվառման  
համար ամեն որ (մեն մեկ) աշխատանքի կամ  
ճյուղի ղեկավարը դրանցում ե որագիր—տեղե-  
կագրի կամ աշխատանքի հաշվառման տախտա-  
կում արտելի անդամների փաստորեն կատարած  
աշխատանքը. (հաշվառման ձեվերը պետք ե ըն-  
դունված լինի վարչության կողմից):

51. Աշխատանքի տախտակը պետք ե պա-  
րունակի հետեւյալ տեղեկությունները.

ա) Ով ե կատարել աշխատանքը, բ) վոր-  
քան որ կամ ժամանակ ե գնացել այդ աշխա-  
տանքի վրա, գ) ինչ ինվենտար ե գործածվել այդ  
աշխատանքի մեջ, դ) ինչ աշխատանք ե կա-  
տարվել (վար, խոսանարք, հունձ, քաղան, ջուր  
և այլն):

52. Աշխատանքի հաշվառումն ել ավելի ճշտելու նպատակով յուրաքանչյուր գրագետ անդամ իրավունք ունի, ինքը իրեն համար նշումներ անել իր աշխատած որերի մասին:

53. Աշխատած որերն ու ժամերը գրվում ե ամեն մի անդամի հաշվեգրքույթում 15 որը մեկ անգամ:

54. Արտելի բոլոր անդամները պետք ե ունենան հաշվեգրքույթներ Կոլտնտկենստրոնի կողմից ընդունված ձևով:

55. Անդամների հետ բոլոր հաշիվները մաքրըվում են հաշվեգրքույթների մեջ յեղած և անձնական հաշիվների մատյանի գրանցումների հիման վրա:

56. Աշխատանքի հաշվառման տախտակը ամեն ամսվա համար լրացված ու հաստատված վարչության կողմից հաջորդ ամսի սկզբին փակցվում ե պայմանագրոված տեղում (կամ ըստ ձյուղերի կամ ըստ առանձին խմբակների) և հայտարարվում ե, կամ ընդհանուր ժողովում կամ խմբակների ժողովներում:

Յեթե 3 որփա ընթացքում անդամների կողմից վոչ մի բողոք չլինի աշխատանքի հաշվառման տախտակը համարվում ե վերջնականապես հաստատված:

### Ա. Ընառանակի վարձատրության կարգը

57. Արտելներում աշխատանքի վարձատրության հիմնական ձևը պետք ե լինի գործարքային:

58. Բոլոր աեսակի աշխատանքները բաժանվում են 5 կատեգորիայի (իսկ խոշոր մերենայցված տնտեսություններում կարելի յէ բաժանել 7 կատեգորիայի):

59. Գործարքով կատարվող աշխատանքի վարձատրության չափը փորոշելու համար պետք ե այդ աշխատանքի որփա դրույքը (փորոշված կատեգ. համաձայն) բաժանել որփա աշխատանքի արտադրանքի վրա (հօրու վերաբոտք) որինակ՝ ընդունենք վոր ցանելը 3-րդ կատեգ. մեջ ե մտնում. այդ կատեգ. համար աշխատավարձ ե ընդունված 1—20 կ. իսկ ցանքսի. որփա արտադրանքի նորման ընդունված ե 3 հեկտար (այսինքն մեկ մարդ մեկ որփա ընթացքում կարող ե ցանել 3 հեկտար շարքացանով) մեկ հեկտար գործարքով կատարվող ցանքսի արժեք ստանալու համար պետք ե մեկ ո. 20 կ. բաժանել 3-ի վրա կտացվի 40 կոպեկ, ուրեմն կոլխոզնիկը մեկ հեկտար ցանքս կատարելու համար կտանա 40 կոպեկ:

60. Յուրաքանչյուր տնտեսություն յելնե-

լով իր ունակությունից և իր արտադրական ծըրագրից ընդհանուր ժողովում վորոշում ե 1-ին կատ. աշխատավարձի չափը, համաձայնեցնելով այդպիսին շրջկոլտնտմիության հետ։ Որինակ՝ ընդունելով 1-ին կատեգորիայի աշխատավարձը 60 կ., մյուս կատ. աշխատավարձը կարտահայտվեն հետեւյալ փոխհարաբերությամբ և գումարներով։

Կատեգորյաներ.	Կատեգորյաների հարաբերությունը.	Դրույքի չափը.
1-ին »	1	60 կ.
2-րդ »	1,30	82 »
3-րդ »	1,60	96 »
4-րդ »	2,00	1—20 »
5-րդ »	2,50	1—50 »

61. Այն աշխատանքները, վորոնք դժվար են յենթարկվում հաշվառման, վարձատրվում են որագրածով. համաձայն այն կատեգորիայի, վորի մեջ այդ աշխատանքը դասված է։

62. Մասնագետների և այլ դրսից վարձված աշխատավորների աշխատավարձի խնդիրը կանոնավորվում ե ու համաձայնեցվում. Ե համապատասխան Արհեստակցական Միությունների հետ։

63. Գործարքային սիստեմի ժամանակ անհրաժեշտ ե ամեն տեսակի աշխատանքի համար

սահմանել չափ, թե միջին աշխատավորը 10-ը ժամյա բանվորական որվա ընթացքում (վորոշություններով) կամ մեքենաներով) տվյալ աշխատանքի տեսակետից, վորքան աշխատանք կկատարի։

64. Աշխատանքի վորակը բարձրացնելու նպատակով, բոլոր արտելներում ընդհանուր ժողովների կողմից պետք ե վորոշվի լավ աշխատանքի համար պարզեցնելու մասն ձևերն ու չափը. իսկ վատ անբարեխիղճ կատարած աշխատանքի համար առևգանքի չափը։

65. Նույնանման աշխատանքի կատարման դեպքում, թե կանայք և թե պատանիները ստանում են տղամարդկանց հետ հավասար վարձատրություն։

66. Աշխատանքի արդյունքի բաշխումը և բոլոր տեսակի հաշիվները արտելի անդամների մեջ, կատարվում ե տարեհաշիվը կազմելուց հետո և այդ տարեհաշիվը ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո։

67. Յուրաքանչյուր անդամին տարվա ընթացքում արվում ե ավանս գրամով, մթերքներով, յելնելով արտելի տնտեսական հնարավորություններից, այն հաշվով վոր ավանսի ընդհանուր գումարը յերբեք չգերազանցի տվյալ ընտանիքի ամբողջ ստանալիքների  $50^0/\text{ը}.$

VIII ԲԵՐՔԻ ՀԱՅՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՊԱՇՊԱՆՈՒԹՅՈՒՆ

68. Բոլոր մթերքները, վորոնք ստացվում են ընդհանուր գյուղատնտեսությունից և ոժանդակ ձեռնարկություններից, ճշգրիտ կերպով հաշվի են առնվում ու գրվում են արտելի մուտքին, տեղում գոյություն ունեցող պետական մթերման գներով:

69. Այդուց, բանջարանոցից և այլ դաշտերից ստացվող բերքի բոլոր մթերքները հավաքման հետ զուգահեռ մասմաս մուտք ե անվում և գրվում արտելի մուտքին:

70. Շուտ փչացող մթերքները նախ քան դաշտից հավաքելը արտելի վարչությունը պետք ե կամ ապահովի նրա վաճառքը կամ թե պահելու հարմարություններ ստեղծի կամ միջոցներ ձեռք առնի վերամշակման յենթարկելու:

71. Մթերքների ամեն տեսակի ծախսումը, անդամներին տալը, նրանց վաճառքը դրսի շուրջայում իսկույն և յետ պետք ե գրանցվեն հաշվապահության կողմից, վորպես յելք:

72. Արտելը իր մթերքներն ու ինվենտարը պահպանելու համար – ունենում ե պահեստներ, մառաններ և ծածկոցներ. բոլոր մթերքները պահեստապետին հանձնելուց նրանից վերցնվում ե ստացական այդ մթերքների հանձման մասին:

73. Արտելի անդամներին արվող բոլոր տեսակի կանխավճարները լինի դա գրամով կամ մթերքներով, գրվում ե նրա անձնական հաշվին և նրա հաշվեգրքույկում:

IX. ՏԵՐԵԿԸՆ ՀԱՅՎԱՑԼՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼ

74. Տնտեսական տարվա վերջում արտելի վարչությունը կազմում ե տարեկան հաշվետվություն, վորը լսում և հաստատում ե արտելի ընդհանուր ժողովը:

75. Վերատուգիչ հանձնաժողովը պետք ե նախ քան ընդհանուր ժողովը մանրամասն կերպով ծանոթանա տարեկան հաշվետվության հետ, քննության առնի նրա տվյալները և ամբողջ հաշվետվության մասին տա իր յեղբակացությունը: Միաժամանակ անհրաժեշտ ե հարմարություններ ստեղծել վոր անդամները ծանոթանան կաղմած տարեհաշվին:

76. Տարեհաշիվը արտելում պետք ե կազմել կոլանտկենտրոնի կողմից ընդունված հատուկ ձևերով:

X. ԱՐՑԵԼԻ ԵԵԿԵՐՈՒՑՆԵՐԻ ԲԱՑԽՈՒԹՅՈՒՆ

77. Տնտեսական տարվա վերջին արտելը, ընդհանուր յեկամուտների վերջնական բաշխում ե կատարում իր անդամների միջև, հիմք ունե-

նալով տարեհաշխվը և ընդհանուր ժողովի վորուցումը այդ մասին:

78. Տարվա ընդհանուր (ՎՈԼՈՅ) լեկամուտից առաջին հերթին հանում ենք արտադրության հետ կապված ծախքերը, այն եւ սերմացու, անասունների կերը, մեռյալ և կենդանի (յեզ, կով, վոչխար, մեղու, ձի և ալյն) ինվենտարի ամորտիգացիան, ամբողջ գույքի, ցանքսերի, այգիների ապահովագրական ծախքերը, վարկերի տոկոսները, միասնարկը, ջրային տուրքը, զրասենյակային ծախքեր, արոտների, կապալավարձ, այգիների ցանքսերի, անասունների բժշկության գույքի վերանորոգման և այլ ծախքերը, Մնացորդ գումարից, վորը կազմում եւ պայմանական ոգուտը հատկացումներ եւ արվում  $15-30\%$ -ի սահմաններում, տնտեսության լայնացման ֆոնդին (անբաժանելի, պահեստի, և այլ դրամագլուխներին, կուլտ կրթական լեզ ալլ ֆոնդերին): Հատկացումները կատարելուց հետո  $2-3$  մնացորդը հանդիսանում եւ անաշխատունակների պահպանման յեզ աշխատավարձի ֆոնդը: Այս ֆոնդերից նախ վորոշում եւ անաշխատունակ շնչերի պահպանման գումարը. այդ վորոշելու համար վարչությունը վորոշում եւ ու ընդգանուր ժողովի հաստատությանն եւ ներկայացնում թե մեկ անաշխատունակ շնչի կենսական կարիքները

հոգալու համար 1 տարում, ինչքան միջոցներ են հարկավոր (անդամթերքները, հագուստեղեններ և ալյն):

Ընդհանուր աշխատանքի վարձատրման ֆոնդից դուրս գալով անաշխատունակների պահպանման ծախքերը, մնացորդ գումարը բաշխվում եւ աշխատող անդամների վրա, ըստ լուրսքանչուր կոլ անդամի կատարած աշխատանքի քանակի ու վորակի:

79. Տարեհաշխվը վակելուց յուրաքանչուր անդամի հասանելիքից պահվում եւ նրա և նրա ընտանիքի անդամների, տարվա ընթացքում ավանսի հաշվով տրված բոլոր գումարները և մթերքների արժեքը:

80. Տնտեսության լայնացման և ֆոնդերի ուժեղացման համար  $15-30\%$  հատկացումները դասավորվում են ըստ դրամագլուխների հետևյալ կերպ:

- ա) Անբաժանելի դրամագլուխն  $60-70\%$ -ը.
- բ) Պահեստի դրամագլուխն  $10\%$
- գ) Հատուկ դրամագլուխն  $10\%$
- դ) Կուլտ-կրթական և այլ ֆոնդերին  $10-15\%$ .

81. Բացի այս դրամագլուխներից, ընդհանուր ժողովը կարող է վորոշ գումար հատկացնել պարզեատրման ֆոնդին, վորի նպատակն եւ

խրախուսել աշխատանքի արտադրողականության  
բարձրացումը և փորակի լավացումը:

82. Անբաժանելի դրամագլուխը վոչ մի  
դեպքում բաժանման յենթակա չե—անդամ կո-  
լեկտիվի լուծարքի դեպքում:

83 Անբաժանելի դրամագլուխը կարելի յե  
ռդտագործել գույք ձեռք բերելու, հիմնական  
կառուցումների, սերմացուի և ալլ նպատակների  
համար: Անբաժանելի դրամագլուխի մեջ ե մտնում  
բացի տարեկան յեկամուտից կատարվող հատ-  
կացումը նաև անդամների մուտքի վճարը, հա-  
մայնացվող գույքի,  $25-50^0/_{\circ}$ ը, կոլխոզի ստա-  
ցած մրցանակները ու նվերները, միաստուրքից  
և ալլ տուքերից պետության կողմից արված զեղ-  
ջերի գումարները, պետական կոպերատիվ յեվ ալլ  
հիմնարկների կողմից կոլխոզին անվերադարձ  
տրված գույքի արժեքը:

Պահեստի դրամագլուխը պետք ե դնել հեշտ  
իրացվող նյութերի և գույքի մեջ (նպատակա-  
հարմար ե պահեստի դրամագլուխը ոգտագործել,  
փորպես շրջանառու միջոց)

Հատուկ դրամագլուխը ծառայում ե, ընդհա-  
նուր ժողովի կողմից վորոշված վորևէ նպատակի  
(որինակ՝ կառուցումների, բարդ մեքենաներ  
դնելու և այլն):

Կոլեկտիվի անդամ բանվորները և ծառա-

րողները, վորոնք աշխատում են կոլեկտիվից  
դուրս մուծում են (համաձայն կանոնադրության)  
իրենց աշխատավարձից  $3-10^0/_{\circ}$ ը կոլտնա-  
դրամարկղը:

85. Յեթե կոլտնտեսության ընդհանուր ժո-  
ղովը վորոշել ե անաշխատունակ շնչերի պահ-  
պանությունը վերցնել տնտեսության վրա, այն  
դեպքում դրսուժ աշխատողները պարտավոր են  
լրացուցիցիչ տոկոսներ տալ:

86. Լրացուցիչ տոկոսների չափը վորոշվում  
է հետեւյալ կերպ: Ընդհա՛ ուր յեկամուտից դուրս  
գալով արտադրության հետ կապված ծախքերը  
(սերմացու, ամորտիզացիյա, ապահովագրության,  
վարկերի տոկոսները, գրասնեյակային ծախքեր  
և, անտեսության լայնացման ֆոնդերի հատկա-  
ցումները—մնացորդ գումարը տրվում ե աշխա-  
տողներին աշխատավարձ և անաշխատունակնե-  
րին նրանց կենսական կարիքները հոգալու:  
Նախած թե այս վերջինի համար տրվող (անաշ-  
խատունակների պահպանման ֆոնդը) վոր տո-  
կոսն ե կազմում բաշխման յենթակա ընդհանուր  
(անաշխատունակների ֆոնդին գումարած աշխա-  
տավարձը) գումարի, ըստ այնմ ել այդ տոկոսի  
չափով ծառայողները պարտավոր են իրենց աշ-  
խատավարձից  $3-10^0/_{\circ}$ ից զատ լրացուցիչ կար-  
գով դրամ մուծել կոլտնտեսության դրամարկղը:

87. Այն անդամ ծառալողները, վորոնք ան-  
աշխատոնակ չնչեր չունեն, նրանք լրացուցիչ  
տոկոսներ չեն հատկացնում, այլ տալիս են մրայն  
3—10%՝ վորի փոխարեն նրանք իրավունք ու-  
նեն կոլանտեսությունից իւ ենց կարիքների հա-  
մար կանխիկ վճարով ստա՞լ գյուղատնտեսա-  
կան մթերքները, անդամների համար սահմանված  
նորմաներով և գներով:

#### XI. ԿԵՐՊԸՊԸՀՈՒԹՅՈՒՆ ԽՆԴԻԲՆԵՐԸ ԱՐՏԵԼՈՒՄ

88. Արտելի բոլոր անդամները, պետք ե ա-  
շակցեն զեկավար մարմիններին արտելի բոլոր  
ճյուղերում մտցնելով աշխատանքային խիստ  
դիսցիպլինա (կարգապահություն). արտելի դիս-  
ցիպլինան պետք ե բղխի նրա անդամների խորը  
գիտակցությունից, և ամեն մեկը հսկի դիսցիպ-  
լինայի վերաբերալ ընդունված կանոնները ճշգրիտ  
կերպով կիրառելու գործին:

89. Կանոնագրությունը խախտողներն, ընդ-  
հանուր ժողովի վորոշման չենթարկվողները,  
վարչության և վարչ. նախագահի ու սեկցիաների  
ղեկավարների կարգադրությունները չկատա-  
րողները, առաջին անդամ նկատողության են  
յենթարկվում, յերկրորդ—անդամ—խիստ նկա-  
տողության և տուգանքի, իսկ յերրորդ անդամ յե-  
թե նրանք անուղղելի յեն, ընդհանուր ժողովի  
վորոշմամբ հեռացվում են կոլեկտիվից:

XII. ԵՐՏԵԼԻՆ ԿԻՑ ԵՐՏԵԳՐԱԿԱՆ ՀԸՆՉՆԱԺՈՂՈՂԻ ՈՒ ԽԱԲՀՅԴԵԿ-  
ՏԱԿԻԹՅԱՆԵՐԻ ԿԱԶՄԵԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՇՆԵԼԻՔՆԵՐԻ  
Խ Ն Գ Ի Բ Ը.

Արտելի վարչության աջակցելու, նրա աշ-  
խատանքները թեթևացնելու, արտադրողակա-  
նությունը բարձրացնելու, աշխատանքը կազմա-  
կերպելու, սացիոնալ հիմունքների վրա դնելու  
յեկ վորը ամենակարևորն ե արտելի բոլոր ան-  
դամներին կոլանտաշնարարությանը մոտեցնելու և  
ակտիվ մասնակից դարձնելու նպատակով, ար-  
տելի գոնազան ճյուղերին կից կազմակերպվում  
և արտադրական խորհրդակցություններ:

ԵՐՏԵԳՐԱԿԱՆ ԽԱԲՀՅԴԵԿԵՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԸ ՅԵՎ ԻՐԵՎԱՆԻ ՖԵՆԵՐԸ

90. Արտադրական խորհրդակցությունները  
կազմակերպվում են կոլանտեսության զանազան  
ճյուղերի ղեկավարներից, մասնագետներից, կոլ-  
լեկտիվի ակտիվ և ցանկություն հայտնող ան-  
դամներից:

91. Արտադրական խորհրդակցությունների  
ընդհանուր ղեկավարությունը վերապահվում է  
արտելի վարչության:

92. Արտադրական խորհրդակցության ամե-  
նորյա գործնական աշխատանիքները ղեկավա-  
րում են:

ա) Այն կոլեկտիվ անտեսությունները, վո-

րոնց անդամների թիվը 75-ից չի անցնում, — կոլտնտեսությունների վարչության մի վորեե անդամ:

բ) Իսկ 75-ից բարձր անդամ ունեցող արևոտեսություններում, վարչության կողմից առաջադրվող արտադրական հանձնաժողովը

93. Արտադրական հանձնաժողովի կազմը 3—7 հոգուց և բաղկացած լինում, նայած տրնտեսության անդամների քանակի, և տնտեսության խոշորությանը, այն հաշվով, վոր տնտեսության հիմնական ճյուղերի աշխատավորներից հանձնաժողովի կազմում լինեն առնվազն մեկական ներկայացուցիչներ:

94. Արտադրական հանձնաժողովին նախագահում ե անպարհան խորհրդի անդամներից մեկը (ցանկալի յե, վոր այդ լինի վարչության փոխնախագահը):

95. Արտադրական հանձնաժողովի անդամները, վարչական վոչ մի իրավունքով չեն ոգտվում, նրանք չեն ազատվում իրենց հիմնական աշխատանքներից և վոչ մի վարձատրություն չեն ստանում հանձնաժողովում աշխատելու համար:

96. Արտադրական խորհրդակցությունների նիստերը հրավիրվում ե արտադրական հանձնաժողովի կամ արտելի վարչության այն անդամի

կողմից, վորը դեկավարում ե տվյալ արտադրական խորհրդակցության աշխատանքները:

97. Խոշոր կոլտնտեսություններում, վորոնք ունեն մի քանի ճյուղեր, յուրաքանչյուր ճյուղի համար կազմակերպվում ե առանձին արտադրական խորհրդակցություն, առանձին՝ առանձին ճյուղերի արտադրական խորհրդակցությունների աշխատանքները միմանց հետ կապվելու և ընդհանուր ղեկավարությունը իրականացվում ե վերջիններիս ներկայացուցիչներից կազմված (87 կետի բ. յենթակետում հիշատակված) արտադրական հանձնաժողովի կողմից:

98. Արտադրական խորհրդակցության նիստերին, խորհրդական ձայնի իրավունքով կարող են մասնակցել արտելի յուրաքանչյուր անդամ. զուգահեռ աշխատանքներից խուսափելու համար, արտադրական խորհրդակցությունների աշխատանքի ծրագիրը և քննվելիք խնդիրները պետք ե համաձայնեցված լինեն արտելի վարչության հետ:

99. Արտադրական խորդակցությունների վորոշումները կիրառվում են միմիայն արտելի վարչության հաստատումից հետո:

ԵՐՏԵՐԸԿԵՆ ԽՈՐՀԻՇԽԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԵԼՔԻՑՆԵՐԻ.

100. Արտադրական խորհրդակցությունները պետք ե ակտիվ կերպով մասնակցեն կոլեկ-

տիվ անտեսությունների կազմաբաղական ծրագրերը կազմելու գործում, իսկ հետագայում խորն ուսումնափակելով այդ՝ հետևեն ու նպաստեն ծրագրի կիրառմանը:

101. Տնտեսության զանազան ճյուղերի նորանոր ձեեր ու ուցինալացում մտցնելու խընդիրները պետք ե քննության առնվեն արտադրական խորհրդակցության կողմից և կոնկրետ ձեռկերպումները և բարեփոխումները կիրառվեն արտելի վարչության միջոցով:

102. Զանազան ազգիկուլտաւը ձեռնարկումների խնդիրները ենթակա յեն արտադրական խորհրդակցությունների քննության:

103. Զանազան կուլտուրաների բերքի բարձրացման հարցը պետք ե լինի արտադրական խորհրդակցությունների հիմնական անհիքների շարքում:

104. Աշխատանքի կազմակերպման և վարձատրման բնագավառում խորհրդակցությունները պետք ե քննության առնեն հետեւյալ խնդիրները.

ա) Կոլեկտիվի աշխատունակ ուժերի ձբջորիտ հաշվառում:

բ) Աշխատանքի հաշվառման գործի ուցինալացման հարցը:

գ) Աշխատանքի վարձատրման ձեերի խընդիրը (գործարքային, հատավարձ և այլն):

դ) Մշակել և վերամշակել արտադրողականության նորմաներ:

յե) Աշխատավոր ձեռքերի ավելցուկի հաշվառման, նրանց նպատակահարմար ոգտագործման հնարավորությունների և ձեերի խնդիրները:

զ) Աշխատանքի վորակի և վարձատրման խնդիրները՝ կապված արտադրողականության բարձրացման հետ:

105. Արտադրական խորհրդակցությունները պետք ե զբաղվեն արտադրանքի վորակի բարձրացման և ինքնարժեքի իջեցման խնդիրներով, այդուղությամբ կոնկրետ միջոցներ և հնարավորություններ գտնել անտեսության առանձին ճյուղերի նկատմամբ (անասուններին լավ կերակրել, ցեղերն աղնվացնել, լավորակ ցուլեր և կովեր ձեռք բերել, լավորակ սերմացուներ ստանալ անտեսության մեջ, ոժանդակ ճյուղերը զարգացնել անտեսության մեջ):

106. Արտադրական խորհրդակցությունը նաև պետք ե զբաղվի մթերքների վերամշակման, պահպանման հնարավորություններով և առհասարակ մեռյալ և կենդանի խնդենարի պահպանման խնդիրներով:

107. Արտադրական խորհրդակցությունները անտեսության կամ նրա այս կամ այն ճյուղերի մեջ զգալի փոփոխություններ մտցնելու խնդիր-

ներն անպայմանորեն պետք ե համաձայնեցնեն  
խմբակային գյուղատնտեսի հետ:

XIII ԱԺԽԱՏԵՆՔԻ ԲՅՈՒԹՈՒ ԸՆԵԼԻՔՆԵՐԸ ՅԵՎ  
ՊԵՏՏԱԿԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խոշոր կոլեկտիվ տնտեսություններում,  
կաղմակերպման, նրանց վարձատրման, չափա-  
վորման, (հօրմիրօվկա-ի) և պաշտպանության  
խնդիրները ձևավորելու ու կյանքում կիրառելու  
համար վարչություններին կից կազմակերպվում  
ե աշխատանքի բյուրո:

Բյուրոի աշխատանքները ղեկավարում ե  
այդ գործի համար առանձնացրված վարչության  
հատուկ անդամը, վորը և հանդիսանում ե աշխ.  
բյուրոի վարիչ:

Ավելի խոշոր կոլտնտեսություններում, աշ-  
խատանքի կազմակերպման, վարձատրման և  
պաշտպանության խնդիրները կրանքում կենսա-  
գործելու, գւառումնասիրելու նպատակով առան-  
ձնացրվում են հատուկ աշխատակիցներ, հաշ-  
վառներ, արտադրանքի նորմաներ մշակողներ,  
և տարիֆիկատորներ (աշխատավարձի չափերը  
փորոշողներ), վորոնք անմիջապես յենթարկվում  
են աշխ. բյուրոի վարիչն:

Աշխատանքի բյուրոի հիմնական խնդիր-  
ներն են, —

«Ազգային գրադարան



NL0203284

108. Կոլտնտեսությունների աշխատանքների  
վարձատրման ու տարիֆիկա իշխի խընդիրների  
մշակումը, գործարքով կատարվող աշխատանքի  
վարձաշափի սահմանումը, պարզեատրման ձևե-  
րի, չափերի մշակումը. տուժերի չափի ու դրա  
համար հատուկ տախտակների մշակելը:

109. Արտադրական ծրագրի կազմելը, ա-  
ռանձնապես բանվորական ուժի ոգտագործման  
մասում:

110. բանվորական ուժի բաշխումը, ըստ  
առանձին ճյուղերի:

111. Աշխատանքները (նորմիբովկայի) չա-  
փակորման յենթարկելը և հակողություն ունե-  
նալը աշխատավոր ձեռքի, բանվոր անասունների  
ու գյուղմեքենաների նպատակահարմար ոգտա-  
գործմանը:

112. Կոլտնտեսությունների արտադրական  
խորհրդակցություններում քննվելիք աշխատանքի  
կազմակերպման վերաբերվող խնդիրների և ախտ-  
պատրաստումը.

113. Սոցմրցման պայմանագրերի մշակումը  
ու այդ պայմանագրերով հանձնարարված կետերի  
ժամանակին իրագործման համար պայմաններ  
ստեղծելը և ընդհանրապես նպաստել սոց-  
մրցման ուղղությամբ բոլոր տեսակի ձեռնար-  
կումներին թե ամբողջ կոլտնտեսության և թե  
առանձին անդամների մեջ:

114. Աշխատանքի պաշտպանման, սոց-  
ակահովագրության, կոլտնտեսականների կեն-

յաղի բարելավման և վերջինների կյանքում  
կենսագործելու կանոնների մշակումը:

115. Հարեան կոլտնտեսությունների և  
խորհրդային անտեսությունների աշխատանքի  
փորձի հաշվառումը, այդպիսին տվյալ կոլտնտե-  
սությունում ընդորինակելու համար:

116. Զեռնարկումներ, վորոնք կապված են  
աշխատանքի արտադրողականության բարձրաց-  
ման հետ:

117. Ավելցուկ աշխատող ձեռքերի նպատա-  
կահարմար ոգտագործման միջոցների ստեղծմա-  
նը (արտադրական ձեռնարկումների կազմակեր-  
պում, անտեսությունից դուրս աշխատանք գրա-  
նելը, անայնագններծության զարկ տալը) աշխատող  
ձեռքերի ճիշտ բաշխման և ոգտագործմաննա-  
նապարհով:

118. Կոլտնտեսության անաշխատունակ շրն-  
չերի ապահովման կարգի և ձեռքերի մշակումը:

119. Տնտեսության մեջ վորակյալ բանվո-  
րա՛ան ուժի կարիքի պարզումը, կոլտնտեսու-  
թյան աշխատավորների վորակավորման ուղղու-  
թյան միջոցների ձեռնարկումը:

120. Գյուղուսուցման գործի կանոնավորու-  
մը և ղեկավարումը:

121. Կոլտնտեսության անդամների մեջ կազ-  
մակերպչական աշխատանքի վարձատրման և  
պաշտպանման շուրջը ծագող տարածայնություն-  
ների (կոնֆլիկտների ըլլուծման) խնդիրները:

